

Սիրելի զետաշէնցի եղբայրներ,

Գետաշէնի հարցը մեզ իրապէս կը յուզէ, սակայն ձեր քաջարի կեցուածքը մեր հոգիները կը լեցնէ գրեւորակութեամբ եւ հպարտութեամբ:

Դուք կը քայլէք մեր պապերուն ուղիով եւ ի զին ձեր կեանքին կ'ապահովէք Ձեր եւ Հայ ժողովուրդին գոյատևումը:

Մենք Ազգային Արզարեան Երկրորդական Վարժարանի աշակերտներս, օրը օրին կը հետեւենք Ձեր յուրերուն: Մեր գորակցութիւնը յայտնելու համար մեր հանգանակած գումարը՝ 300 ամերիկեան դոլար կ'ուղարկենք ձեզի:

Կը նախանձենք ձեզի, որովհետեւ կ'ապրիք գործնական հայրենասիրութիւնը, հայրենի հողին վրայ, Ձեր պարտքը կատարելով: Ձեզի հետ ենք, ամեն օր, ամեն վայրկիան: Գիտենք, որ այս տաղնապալի հանգրուանն ալ պիտի անցնէք եւ Արցախը պիտի մնայ ՀԱՅ, Նոր Նախիջեան մը չենք ուզեր ունենալ: Գէտք չէ ունենանք: Կը բաւեն այսքան ցաւ եւ սաղրանք:

Հպարտ կը զգանք Ձեզմով, Ձեր անունը անմահ պիտի մնայ մեր հոգիներուն մէջ:

Ազգային Արզարեան
Երկրորդական Վարժարանի
աշակերտութիւն

Գուրճ Համուտ, 21 - 05 - 1991

ՅԱՐԳԵԼԻ “ԱԶԱՏԱՄԱՐՏ”

Թաթուկ Կրպեյեանի հետ մենք կողք կողքի ենք գտնուել ամիսներ շարունակ: Մեր աչքերի առաջ է յանուն Գետաշէնի Թաթուկը նահատակուել, գործելով իր անօրինակ սխրանքը, որի մասին դեռ շատ պիտի խօսուի: Բնական է այն ուրախութիւնը, որ մենք ապրում ենք ամեն անգամ հրապարակուած, յիշատակուած որեւէ խօսքի հանդիպելով մեր հերոս ընկերոջ հասցէին, սակայն խորին զայրոյթ ապրեցինք «Նաիրի» կինոթատրոնի հարեանութեամբ հաստատուած, իրենց դաշնակցութիւն անուանող խմբի հրատարակած նոյնանուն թերթում Թաթուկի մասին յօդուածի հանդիպելով: Ինչ է սա, մինչ այն, որ փորձում էին սեփականել Հ.Յ.Դաշնակցութեան անցեալը, այժմ էլ ցանկանում են նրա ներկային կամ գուցէ նաեւ ապագայի՞ն տէր դառնալ: Ուզում ենք ճիշտ հասկացուել. Դաշնակցականն ու Դաշնակցութիւնը ապրում ու գործում են յանուն հայ ժողովրդի ու նրա ազգային շահի, հետեւաբար պատկանում են հարազատ ժողովրդին, որի իւրաքանչիւր անդամը կարող է գրել նրա մասին որպէս հարազատ զաւակի: Այո, իւրաքանչիւրը, բայց միայն ոչ նրանք, ովքեր վարկաբեկում են մեր սուրբ ու առասպելական կուսակցութեան անունը: Ասենք, որ նշուած խումբը դժուար թէ որեւէ բան հրապարակէր Թաթուկին նուիրուած, եթէ իմանար, թէ հայ պատմարան մտատրական մեր ընկերը ինչպիսի կարծիք ունէր իրենց մասին: Լաւ կը լինէր, որ տղերքը իրենց «դաշնակ-դաշնակ» խաղը այսուհետեւ խաղային առանց առնչուելու զոնէ մեր սուրբ նահատակների անուան հետ: Ամեն անգամ ժամանակ ու ցանկութիւն չենք ունենալու, որպէսզի թուղթ-գրիչ վերցրած պարզաբանումներ կատարենք:

Յարգելի խմբագրութիւն, եթէ հնարատր է, խնդրում ենք մեր այս բաց նամակը տպագրէք թերթում: